

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳՊՐՈՅԸ

Աստրախանի հայոց օրիորդական զպրոցը բաց-
ւում է 1870 թւին Գէորգ եպիսկոպոս Վեհապետեանի
առաջնորդութեան ժամանակ:

Այդ զպրոցում սկզբում բոլոր ստարկաները
աւանդւում էին ուսաց լիզւով մինչև 1884 թ., երբ
առաջնորդ Սուքիաս եպիսկոպոս Պարզեանը հոգարար-
ձութեան հետ կովկասից հրաւիրեցին զպրոցաւարտ
ուսուցիչներ:

Այդ ժամանակ զպրոցը հիմնովին կերպարանա-
փոխեց, ստարկաները սկսեցին հայերէն աւանդել և
առհասարակ զպրոցական ներքին և արտաքին կեան-
քը կիսախալֆայական դրութիւնից անցաւ ժամանա-
կակից զպրոցական սիւսեմին:

Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանի (ներկայ Վեհափառ
Հայրապետը) առաջնորդութեան օրով, զպրոցի առաջին
պատրաստականը, որ սկզբում անջատ գտնւում էր ս.
Կատարինէի եկեղեցու բակում, միացւեց մայր զպրոցի
հետ. բացի գրանից, երկրորդ և երրորդ պատրաստա-
կանները, որ առաջ մի դասարանումն էին տեղաւոր-
ւած, բաժանեցին առանձին դասարանների, բաց-
ւեց և չորրորդ հիմնական դասարանը, նախ իբրև
մասնագիտական՝ կարուձեի և սպա ստարկայական:
Դպրոցից վերացւեց ամեն մի ֆիզիքական պատիժ.

Ամբողջ տասնհակ տարիներ ընթացքում արձակման ոչ մի դէպք չպատահեց. ոչ անյառաջադիմութեան և ոչ էլ վատ վարքի համար:

Աշակերտութիւնների թիւը հասնում էր մինչև 150 ի, որոնք զհատկապէս էին 3 պատրաստական և 4 հիմնական դասարաններում:

Ուսման չափաւոր վճար վերցնւում էր միայն ունեւորներից իսկ չունեւոր աշակերտութիւններին ճրիպէս տրւում էր դասադրքեր, դպրոցական պիտոյքներ և հագուստ. իսկ ձմեռը նաև թէյ և նախաճաշ:

Արիատակէս հպիսկոպոս Սեդրակեանի ժամանակ ուսուցչական խումբը հիմնովին բարեփոխւեց: Հրաւիրւեցին նոր սյժեր, որոնք թարմ հոսանք մտցրին դպրոցի նախկին միապաղաղ կեանքի մէջ, բայց այդ երկար շտեպ և մինչ ընտրւած մասնաժողովը ծրագիր էր մշակում վաղուցէս: Վափազը իրագործելու— դպրոցը վեցդասեան միջնակարգի վերածելու, նա անցաւ մինխտրութեան ձեռքը և կերպարանափոխւեց համեմատ մինխտրական դպրոցների ծրագրին:

Դպրոցը մինչև 1906 թիւը մնաց դիրեկցիայի իրաւասութեան տակ: Այդ ժամանակ բոլոր առարկաները աւանդւում էին ուսերէն. հայերէն դասերի քանակութիւնը մնաց նախկինը (36 դաս շաբաթական) բոլոր 7 դասարաններում, որ կրօնի դասերի հետ միասին լիովին բաւական էին մայրենի լեզուն հիմնաւորապէս անցնելու համար:

1906 թ. օրիորդական դպրոցը կրկին անցնում է հայ հասարակութեան ձեռքը և տեղափոխւում է նորաբաց սեմինարիայի շինութիւնը:

Այդ ուսումնական տարում՝ օրիորդական դպրոցի ու սեմինարիայի ուսուցչական միացած խմբերը հոգաբարձութեան հետ միասին եռանդուն գործունէութիւն են սկսում. սակայն այդ գործունէութիւնն էլ սահմանափակւում է միայն մի ուսումնական տարով— հետևեալ 1907 թ. մինխտրութեան կարգադրութեամբ օրիորդական դպրոցը փակւում է, որև մնում է փակ մինչև այժմ:

Օրիորդական դպրոցը միշտ եղել է Աստրախանի հայ հասարակութեան սիրոյ և դուրզութեան ատարկայ: Հասարակութիւնը միշտ ուշադիր վերաբերմունք ունէր դէպի այդ հիմնարկութիւնը և ոչ մի միջոց չէր խնայում նրան պահպանելու և բարձրացնելու:

Հասարակութիւնը դեռ մինչև այժմ չի մոռացել իր սիրելի օրիորդական դպրոցը և նրա ջերմ փափազն է տեսնել նրան մի օր վերաբացւած, աւելի էայն, աւելի ժամանակակից, ընդարձակ ծրագրով:

Նախկին Օրիորդական դպրոցի ուսուցիչ

Խ. ՂԱՄԱՐԵԱՆ